

Հայ-Ռուսական համալսարանում գործող
ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի
իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի փող. 123)

Կ Ա Ր Ծ Ի Ք Ը

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ ԱՇՈՏ ԽԱԶԱՏՐՅԱՆԻ

Եղիշե Բազոյանի՝ «Պառլամենտական վերահսկողության էությունը և ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերատառությամբ՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Թեմայի ընտրությունը թելադրված է պառլամենտական վերահսկողության տեսական-իրավական նշանակություն ունեցող հարցադրումների՝ համակողմանի հետազոտման ու գիտականորեն հիմնավորված լուծումներ առաջադրելու անհրաժեշտությամբ: Ընդ որում, պառլամենտական կառավարման ձևի համընդհանուր արդիականացման պայմաններում պառլամենտական վերահսկողության ինստիտուտն ունի առանցքային նշանակություն մեր երկրի սահմանադրական ժամանակակից կարգավորումների իրականացման համատեքստում:

Եվ այդ առումով արդարացի է ատենախոսի այն պնդումը, որ «պառլամենտական վերահսկողության ուժեղացմանը վերաբերող հիմնախնդիրների արդիականությունը պայմանավորված է երկրում պետական իշխանության օրենսդիր մարմնի դերի բարձրացման, իշխանությունների տարանջատման սկզբունքի իրականացումն ապահովող զսպումների և հակակշիռների ճկուն համակարգի ներդրման անհրաժեշտությամբ» (էջ 4):

Հեղինակին հաջողվել է հավուր պատշաճի հիմնավորել թեմայի ընտրությունը, անդրադառնալով դրան առնչվող հիմնահարցերի ինչպես գիտագործնական ու արժեքանական նշանակությանը, այնպես էլ հետազոտության վիճակին:

Բացի այդ, գրախոսության ներկայացված ատենախոսության առանձնահատկությունն այն է, որ թեև Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով խորհրդարանական կառավարման ձևի ամրագրումն ինքնին որոշակի նպատակներ էր ենթադրում, այդուհանդերձ, հարկ է նկատել, որ խորհրդարանական վերահսկողության սահմանադրական ինստիտուտի լիարժեք և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ իրավական դաշտը կատարելագործման, ինչպես նաև արդիական և համակարգային լուծում պահանջող խնդիրների առաջադրման անհրաժեշտություն կա, հաշվի առնելով հեղինակի այն նկատառումը, որ՝ «հետաքրքրությունը Հայաստանի Հանրապետությունում պառլամենտական վերահսկողության թեմայի նկատմամբ պայմանավորված է և՛ իշխանության և՛ հասարակության մոտ երկրում ձևավորված քաղաքական իրավիճակի վերաբերյալ մտահոգությամբ:» (էջ 4):

Միաժամանակ, այս հիմնավորմամբ պայմանավորված անհրաժեշտ է արձանագրել, որ խորհրդարանական վերահսկողության որպես սահմանադրական ինստիտուտի վերաբերյալ հիմնախնդիրների՝ թե՛ տեսական կարևորության ու նշանակության, և թե՛ սահմանադրաիրավական կարգավորումների կատարելագործման համատեքստում համակարգային վերլուծության անհրաժեշտությամբ են պայմանավորված նման թեմայի աշխատանքների ընտրությունն ու արդիականությունը:

Ընդհանուր առմամբ հեղինակն ուսումնասիրել է համարժեք մասնագիտական գրականություն և վերլուծել թեմային առնչվող գիտագործնական նյութ: Հեղինակը դրսևորել է թեմային առնչվող տեսական աղբյուրների համարժեք իրազեկվածություն, ինչպես նաև դրանցից օգտվելու և վերլուծություններ կատարելու անհրաժեշտ ունակություն:

Ատենախոսության կառուցվածքը մասամբ է հնարավորություն տվել ընտրված հարցադրումների առնչությամբ նյութի շարադրանքը դարձնելու առավել տրամաբանական ու ամբողջական, մասնավորապես առանձին հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրությունը նպաստել է մասնավոր ու կոնկրետ խնդիրների ամբողջական հետազոտությանը:

Ատենախոսությունը, որոշ բացառություններով հանդերձ, շարադրված է որոշակի գիտական լեզվաոճով:

Աշխատանքը գերծ չէ նաև որոշ թերություններից, որոնց առնչությամբ անհրաժեշտ է ներկայացնել ընդհանուր և համակարգային բնույթի որոշակի նկատառումներ:

Ընդհանուր բնույթի նկատառումների շրջանակում անհրաժեշտ է նշել, որ ատենախոսության տեքստում, այդ թվում՝ ատենախոսության գիտական նորույթի կառուցվածքում, պաշտպանության ներկայացվող առանձին դրույթների, ինչպես նաև եզրահանգումների տրամաբանության շրջանակում անհարկի տրվում են իրավաքաղաքական գնահատականներ, որոնք կարող են ընդհանուր աղերսներ չունենան հետազոտման առարկա հիմնախնդիրների հետ:

Մասնավորապես, հեղինակի այնդամաբ՝ «Ազգային ժողովի փոքրամասնությունը հարցապնդումների ու ժամանակավոր հանձնաժողովների միջոցով կառավարության գործունեությունը վերահսկողության ենթարկելու բուռն գործունեություն չի ծավալել» (էջ 115), կամ «Ազգային ժողովի դիրքն ու հեղինակությունը պետական մեխանիզմում նկատելիորեն բարձրացել է» (էջ 116), կամ «(...) 2005թ.-ին ընդունված սահմանադրական փոփոխություններն (...) ինքնին կարող են մեկնաբանվել որպես ներկայացուցչական մարմնի սահմանադրական կշիռը չեզոքացնող միապետական ակտի դրսևորում» (էջ 140)» և այլն:

Թերևս, նման մոտեցումները կարող են ենթադրաբար պայմանավորված լինել հեղինակի գիտական ինքնատիպ ոճով, սակայն նման հետազոտություններն առավելապես պետք է բովանդակեն ոչ միայն արդյունքներ ու գիտականության տարր բովանդակող դրույթներ, այլև դրանց ձևակերպման հիմքում ընկած լինեն անհրաժեշտ վերլուծության արդյունքներ, և այդ արդյունքներով պայմանավորված հիմնավորումներ:

Բացի այդ, ընդհանուր բնույթի նկատառումների շրջանակում կարծում եմ, անընդունելի է հաճախակի հանդիպող այնպիսի շեշտադրումներ, որոնք հանրաճանաչ են, և դրանց պարբերաբար կրկնորդելը հատկապես պաշտպանության ներկայացված դրույթներում հանգեցնում են ընդհանուր տրամաբանությունից որոշակի շեղումների: Օրինակ, «պետական իշխանության կրողը հանդիսացող ժողովրդի կողմից իր կամքն արտահայտող օրենսդիր մարմին», կամ «անմիջականորեն պատվիրակված լիազորություն՝ ժողովրդի անունից և ի շահ նրա ընդունված օրենքների կատարման», կամ «ժողովուրդը՝ որպես պետության ներսում իշխանության միակ աղբյուր», կամ «գործադիր իշխանությանը վերահսկելու իր իրավունքը լիազորության տեսքով պատվիրակել օրենսդիր մարմնին, որն արդեն չի կարող դա հայեցողաբար օգտագործել և կաշկանդված է իրավատիրոջ հանձնարարությունը պատշաճ կատարելու պարտականությամբ» (էջ 8)» և այլն:

Միաժամանակ, ատենախոսության վերաբերյալ առկա են որոշակի նկատառումներ, որոնք բանավեճային նշանակություն ունեն և մասնակիորեն կրում են համակարգային բնույթ: Այսպես.

1) Գրախոսվող աշխատանքի շրջանակում ատենախոսության 1-ին գլխի՝ «Պետական վերահսկողության զարգացման փուլերը և պառլամենտական վերահսկողության ինստիտուտի ձևավորումը» վերտառությամբ 2-րդ ենթագլխի (էջ 19-27) կապակցությամբ անհրաժեշտ է նկատել, որ հեղինակն առավելապես դիտարկել է պետական վերահսկողության պատմաիրավական բնույթի հիմնահարցերը, այն դեպքում, երբ ներկայացված ենթագլխի տրամաբանությունից հետևում է, որ հետազոտման առարկա պետք է դիտարկվեն պետական վերահսկողության և պառլամենտական վերահսկողության հարաբերակցության հիմնախնդիրները հատկապես պետության իրավական համակարգի արդիականացման պայմաններում: Այստեղից, ներկայացվածը հեղինակի կողմից որոշակի հստակեցման կամ պարզաբանման կարիք ունի:

2) Աշխատանքի 1.3-րդ ենթագլխի (էջ 28-41) շրջանակում հեղինակի կողմից կատարված վերլուծությունների արդյունքում կատարվել է հետևյալ եզրահանգումը, որ՝ «պառլամենտական վերահսկողությունը մի կողմից օրենսդիր բարձրագույն մարմնի վերահսկողության գործառույթի պետական պաշտոնական դրսևորումն է, իսկ մյուս կողմից վերահսկողական գործունեությունն ապահովող իրավական մեխանիզմը»:

Հիշյալի կապակցությամբ, կարծում եմ, հեղինակը լրացուցիչ պարզաբանում պետք է ներկայացնի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «պառլամենտական վերահսկողությունը որպես պետական պաշտոնական դրսևորում» և «պառլամենտական վերահսկողությունը որպես վերահսկողական գործունեությունն ապահովող իրավական մեխանիզմ» արտահայտությունները բովանդակային առումով և գործառնական նշանակությամբ խիստ հակասական են և միաժամանակ անընդունելի: Ասվածը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ, մի կողմից, եթե վերահսկողությունն ահրաժեշտ է ընկալել որպես իրավասու մարմնի գործունեության ոլորտ, ապա, մյուս կողմից, այդ գործունեության ոլորտը չի կարող ընկալվել որպես նույն գործունեությունն ապահովող իրավական մեխանիզմ:

3) Աշխատանքի 3.2-րդ ենթագլխի (էջ 121-156) և պաշտպանության ներկայացված գիտական նորույթի (կետ 4, էջ 9) շրջանակում հեղինակը գտնում է, որ ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունն անհրաժեշտ է դուրս բերել վարչապետի ենթակայությունից, դարձնել նախարարություն՝ այն պատճառաբանության, որ այդ մարմնի վրա տարածել պառլամենտին հաշվետու լինելու պարտավորություն: Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ Ազգային ժողովի առաջ հաշվետու լինելու պարտավորություն կրում է Կառավարությունը, այդ թվում նաև պետակա կառավարման մարմինները:

Այս առումով, կարծում եմ հեղինակի կողմից ներկայացված դրույթը լրացուցիչ հստակեցման ու պարզաբանման կարիք ունի հատկապես պաշտպանության ենթակա գիտական նորույթի տեսանկյունից:

4) Ատենախոսությունում պաշտպանության ներկայացված որոշ հիմնադրույթների շարադրանքները, որոնք պայմանավորված են սահմանադրական և օրենսդրական կարգավորումներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությամբ, հնարավորություն չեն տվել լիարժեք բացահայտել պաշտպանության ներկայացված գիտական նորույթի էությունն ու գիտականությունը: Այստեղ, խոսք կարող է լինել աշխատանքի 2.3, 2.4, 2.5-րդ և այլ ենթագլուխների (էջ 74-75, էջ 78-80, էջ 85-86) պաշտպանության 3-րդ կետով ներկայացված դիրքորոշման մասին (էջ 9):

Ներկայացված նկատառումները առնչվում են գիտական բանավեճի շրջանակներին կամ ունեն խմբագրական թերություններն ընդգծելու բնույթ և չեն

նսեմացնում այն գիտական աշխատանքը, որը ներկայացվել է հրապարակային պաշտպանության:

Չնայած այս ամենին՝ ատենախոսի կողմից կատարված է գիտականորեն հիմնավորված, բարեխիղճ աշխատանք: Ատենախոսության և սեղմագրի ձևավորումը, կառուցվածքը և ծավալը համապատասխանում են ՀՀ ԲՈԿ-ի կողմից սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» 20025 թվականի սեպտեմբերի 11-ի ՀՕ-285-Ն օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումների համաձայն՝ «(...) հայցորդ ձևակերպած անձանց համար գիտական աստիճանի շնորհման գործընթացը շարունակվում է կարգավորվել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքի 16-րդ հոդվածի դրույթների հիման վրա ընդունված իրավական ակտերով (...», ուստի՝ ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Եղիշե Բազդյանի՝ «Պառլամենտական վերահսկողության էությունը և ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

**Հայաստանում Եվրոպական համալսարանի
իրավագիտության ամբիոնի պրոֆեսոր,
Ի.Գ.Դ., Պրոֆ.**

5 նոյեմբերի 2025 թ.

Ա.Շ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Պրոֆեսոր Աշոտ Խաչատրյանի ստորագրությունը
հաստատում եմ**

**Հայաստանում Եվրոպական համալսարանի Մարդկային ռեսուրսների
կառավարման բաժնի պետ**

Տաթևիկ Մարության

